

XIV—XVIII դդ. գիտության մասին խոսելիս ակադ. Լ. Խաչիկյանը գրում է. «Արևելյան ժողովուրդներից հայերն առաջինն էին, որ հաղորդակից դարձան եվրոպական գիտության նվաճումներին և, ինչպես թարգմանություններ կատարելով, այնպես էլ ինքնուրույն երկեր շարադրելով հարստացրին հազարամյա հայ մատենագրությունը նոր արժեքներով: Ինչ-որ շափով խախտվեց նաև եկեղեցու մենաշնորհը գիտության նկատմամբ. գիտության ասպարեզ իջան նաև աշխարհական մարդիկ, որոնք հակադրվելով «Բաճախան քննութեանն հեռեի հերձուած» իր դարն ապրած դիրքորոշմանը, մշակեցին մի նոր մոտեցում գիտության նկատմամբ, որ Ավետիք Տիգրանակերտցին ձևակերպեց՝ «Լաւ է շաճգեա մեղաւոր, քան թէ աճառակ (իմա՛ անբան, տգէտ) աղաւթ» խորմաստ բանաձևով»<sup>1</sup>: Ահա այս Ավետիք Տիգրանակերտցու մասին տեղեկություններ ենք քաղում բացառապես իր թողած ձեռագիր աշխատությունների ընդարձակ հիշատակարաններից:

Առաջինը բազմավաստակ Ղ. Ալիշանն է ուշադրություն դարձրել Ավետիք Տիգրանակերտցու աշխատություններին, հրատարակել Վենետիկում պահվող նրա ձեռագրերի հիշատակարաններն ու ուղեգրությունը, նկարագրել ձեռագրերն ու արժեքավորել դրանք<sup>2</sup>: Հոգվածից դատելով՝ Ալիշանին հայտնի են եղել Ավետիք Տիգրանակերտցու հետևյալ աշխատությունները՝ ամփոփված հինգ ձեռագիր ժողովածուների մեջ. 1. Տոմարագիտական և աստղաբաշխական նյութերի ժողովածու:

2. Ժողովածու, որտեղ կան «ըստուուլայ» (Astrolabe) գործիքի նկարագրությունը արաբերեն անուններով, այն օգտագործելու ձևերը, աստղերի դիրքը, երաժշտական նյութեր և այլն: Ժողովածուն 120 էջ է:

3. Ոսկեփորիկ, 140 էջ:

4. Դարձյալ աստղաբաշխական մի ձեռագիր՝ մեծագույն մասը՝ ախտաբացույց, 130 էջ:

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 482—483 (ընդգծումները հեղինակինն են):

<sup>2</sup> «Բազմավէպ», 1897, էջ 317—321, 375—380, 423—425, 459—463: Շարունակական այս հոդվածն անստորագիր է: Հոգվածի հեղինակը Լեոյին անհայտ է (Լեո, Հայոց պատմություն, հ. 9, Երևան, 1946, էջ 423, հմմտ. նույնի՝ «Երկերի ժողովածու», հ. III, Երևան, 1969, էջ 413): Լ. Խաչիկյանը իրավացիորեն հեղինակ է համարում Ղ. Ալիշանին («Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 490): Իրոք, հոգվածի հեղինակը Ղ. Ալիշանն է («Բազմավէպ», 1897 թ. սարեկան ցանկ, նաև Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենադիտություն, հ. 1, Վենետիկ, 1909—1912, էջ 1113, նաև Ավետիք Տիգրանակերտցու ուղեգրության էմիլ Գեզայի իտալերեն թարգմանությունը. E. Deza, Un Viaggiatore Armeno traverso l'Abissinia, per cura p. L. Alishan, Venezia, 1897):

5. Աշխարհագրական նյութերի ժողովածու, որտեղ և հեղինակի ուղեգրությունն է, 90 էջ<sup>3</sup>։

Ավետիք Տիգրանակերտցու աշխատություններից հրատարակված է միայն ուղեգրությունը, որը հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է բովանդակում հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների մասին։ Ուղեգրությունը դեռևս հանգամանորեն ուսումնասիրված չէ, թեև կան մի քանի թարգմանություններ<sup>4</sup>։ Չի պարզված ուղևորության նպատակը։ Մի ուղղակի ցուցում, այնուամենայնիվ, ունենք։ Ավետիքը իր Աստղագիտության և Տոմարի սկզբում դրած հիշատակարանում դրում է. «Այս դիրքս ամենայն տումարական արուեստից և աստեղաբաշխական ճէտվէլից (աղիւսակաց) և մեկնութեանց Տէֆտէր է, զոր ես նուաստ Աւետիք ընթերցող, ծնունդ Տիգրանակերտեան, որ և սնեալ եղէ ի բայում քաղաքս, այսինքն, նախ ի էրզրում քաղաք, կացի անդ զամս ԺԴ (14), և յետոյ ի Տիրանակերտ քաղաքն փոխեցայ, ի Բազէշ, ի Վան, ի Պարսից երկիրն, ի Քրդստան, ի Արապիստան, ի Անատոլի, ի Սեբաստիա, ի Թօխաթ։ Պատճառ իմ շրջիւն այսքան աշխարհ, վասն գրասիրութեանս և մէրէֆեթի (արուեստ, գիտութիւն) աղագաւ. ոչ թէ ի Հայոց դրոց միայն, այլ ամենայն սղգաց դրոց, այսինքն, Արապաց, Ֆարսից, Ջհոաց, Ղպտից, Ասորոց, Յրանկաց, ի Յունաց դրոց և վարպետաց»<sup>5</sup>։

Սակայն դժվար է պատկերացնել, թե Տիգրանակերտցին արվեստ ու գիտություն էր փնտրում Սուդանում, Եթովպիայում և այնուհետև՝ Աֆրիկայի ավազուտներում։ Տարակարծությունների տեղիք է տալիս ուղևորության ժամանակը։ Հայտնի է, որ նա մինչև 1709 թ. արդեն ճանապարհորդել էր «Ղպտից և արապաց» աշխարհում, որովհետև վերոնշյալ հիշատակարանի մեջ տալիս է նաև աշխատության շարադրման թվականները. «եղև սկիզբն գրքիս ժողովելոյ և հետեւելոյ իմ այս արուեստիս՝ ի թվին հայոց ՌՃԼԳ (1684), մինչ ի ՌՃԾԸ (1709) ամն՝ այս գիրքս դեռ կու գրվի և կու ժողովվի»<sup>6</sup>։ Ակադ. Լ. Խաչիկյանը ուղեգրության ժամանակը համարում է 1682—1704 թթ., գրելով՝ «Ճանապարհորդել է 1682—1704 թթ., եղել է Հաբեշտանում, Նուրիայում, Սուդանում, Չադ հանրապետության ներկայիս տերիտորիայում, ապա Սահարայի վրայով անցել է Աֆրիկայի հյուսիսային շրջանները, հասել մինչև Ջիրբալտար»<sup>7</sup>։ Սակայն Ավետիքի իսկ հիշատակարանից տեղեկանում ենք, որ նա 1695 թ. եղել է էրզրում քաղաքում. «Զայս Ուստուռլայի գիրքս յառաջն էրզրում քաղաքն օրինակեցի, ի թվին հայոց ՌՃԽԴ (1695) մարտի Ե (5)

<sup>3</sup> Այս ձեռագրերից բացի, ըստ Ալիշանի՝ «Աւետիքի այլևայլ գրածներէն քանի մի մեծադիր, բայց բարակ հատորներ՝ խիտ-խիտ տողերով, գտեր էր ի Թօխաթ Արամեան Գաւիթ ուսումնասէր Սեբաստացին, որոց մէկն կամ երկուքն կարծեմ թուրքերէն կամ արաբերէն գրուած էր» ( «Բազմավէպ», 1897, էջ 320)։ Ձեռագրերի ճակատագիրը մեզ հայտնի չէ։

<sup>4</sup> Դեղաշի թարգմանությունը վերևում հղվեց։ Ռուսերենի է թարգմանել Գր. Խալաթյանը և հրատարակել 1898 թ. Մոսկվայում. Г. А. Халатьянц, Армянский памятник XVII-го века с данными о географии Абиссинии и северной Африки вообще (Итипагиум Аветика Багдасариана, чтеда из Тигранакерта), Москва (Отдельный оттиск), թարգմանությունը ոչ լրիվ է, նույնությամբ թարգմանված են նաև Ալիշանի ծանոթագրումները։ Հմմտ. Ա. Ղազիկյան, նշվ. աշխ.։

<sup>5</sup> «Բազմավէպ», 1897, էջ 317—318։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 318։

<sup>7</sup> Լ. Խաչիկյան, Հովհաննես Զուլալեցու հաշվետուարը («Armeniac», Վենետիկ, 1869, էջ 245, ծանոթ. 1)։

աւարտեցաւ<sup>8</sup>։ Հայտնի է նաև, որ նա 1700-ին Տիգրանակերտում էր գտնվում. «Եղև սկիզբն գրգիս ի թվին հայոց ՌՃԽԹ (1700) ամսեանն յովիսի փէ (17) պատկեր օրն շորեքշաբաթի, ի քաղաքին Տիգրանակերտ, որ է Համիթ կամ Տիարպէքեր»<sup>9</sup>, իսկ 1701—1707 թթ. եղել է Սեբաստիայում<sup>10</sup>։ Մնում է ենթադրել, որ ուղևորութունը «արապաց, ղպտից, ջհաց» երկրներում կայացել է 1696—1699 թթ., մանավանդ որ՝ մինչ այդ նա 14 տարի եղել է էրզրումում։ Հարցի լուծման համար կարևոր է նաև պարզել Աստվածատուր հարբերոցի վարդապետի (մականունը՝ Թմբուկ) ինքնութունը, որը ուղեկցել է Ավետիքին՝ նրա աֆրիկյան ճանապարհորդության ժամանակ։ Առայժմ հայտնի է միայն, որ նա 1701—1722 թթ. Սեբաստիայի արքեպիսկոպոսն ու ս. Նշան վանքի առաջնորդն էր<sup>11</sup>։ Արդյո՞ք նրա մասնակցութունը այդ ուղևորությանը կասկածի տակ չի առնում դրա զուտ գրասիրական նպատակները, ինչպես փորձում էր հավաստիացնել Ավետիք Տիգրանակերտցին։

Ավետիք Տիգրանակերտցու աշխատութուններից երկուսն էլ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, որոնք վրիպել են նրանով զբաղվող գիտնականների ուշադրութունից։ Դրանցից մեկը Գավազանագիրք է (ձեռ. № 1492, 6243, 7424, 8072), մյուսը՝ Աստղաբաշխութուն (ձեռ. № 10095)։ Ընդամենը 26 թերթից բաղկացած Աստղաբաշխութունն ունի հետևյալ հիշատակարանը. «...թարգմանեցեալ ի լատինացոց իմաստասիրաց ձեռամբ Աւետիք ընթերցողի, ի խնդրոյ Ամրակում իմաստակի. և է այս նոր քարգմանութիւն, որ չկա ի մէջ հայոց առումարաց պատճէիւն»<sup>12</sup>։ Ամենայն հավանականութեամբ, «Աստղաբաշխութունը» բեկորն է Ավետիքի՝ Թավրիզում թարգմանած աշխատության, որի մասին գրում է իր հիշատակարանում. «Մինչդեռ ես մեղաւոր ընթերցողս՝ էի ի յԱրզրում քաղաք՝ պարապեալ հետ գրոց և տուժարական արուեստից՝ գրել և յայլոց ազգաց ի հայ լեզու թարգմանել, եկն աստղաբաշխ մի ի Ֆրանսիզա երկրէն՝ ի քաղաքս, որ պիտի գնայր ի Չինումալին երկիրն, և մեր լուեալ՝ անյապաղ գնացաք ի մօտն... զգրեանք նորա որոնելով և հարցանելով, և երբեմն այլ անծանօթ դժուարիմաց աստխաղիտութեան արուեստն դաս առնելով, գտի գիրք ՚իմն ի մօտ նորա և տեսի զայս Աստեղաց շարքն, որ անծանօթ էր ի մեր գիտութենէն և չկայր ի մէջ մեր ազգին, և ես տեսի, որ կարի հարկաւոր էր արտաքարշել ի մեր բառն»<sup>13</sup>,

Գավազանագիրքն ունի հետևյալ վերնադիրը. «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք», սկսվում է աշխարհի արարչագործութունից և հասնում մինչև իր ժամանակները՝ 1715 թ.՝ Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի գահակալության առաջին տարին, որի պատվերով էլ դրված է եղել այն<sup>14</sup>։

<sup>8</sup> «Բազմավէպ», 1897, էջ 375։

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 424։

<sup>10</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1492, էջ 171ր—172ա։

<sup>11</sup> Գ. Գալեմբյարյան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին կաթողիկոսայք, Վիեննա, 1915, էջ 250—251, նաև Գյուտ Աղանյան, Դիվան հայոց պատմութեան, դիրք (Մանր մատենագիրք ժն—ԺԹ դար), Թիֆլիս, 1912, էջ 377—378, 406—408։

<sup>12</sup> Ձեռ. № 10095, էջ 26ր (այս և հետագա ընդդժմներն մերն են)։

<sup>13</sup> «Բազմավէպ», 1897, էջ 329։

<sup>14</sup> Ավետիք Տիգրանակերտցին նախքան «Գավազանագիրքը» շարադրելը գծել է ժամանակագրական աղյուսակները, լրացրել և ապա շարադրել զուգահեռ իրադարձութիւնները, որի հետևանքով էլ, երբ ստիպված է եղել դադարեցնել գրելը և ձեռագիրը տալ պատվիրատուին՝

Գավազանադրքի շորս ձևագրերից լրիվ են երեքը (ձեռ. №№ 1492, 6243, 7424), Ձեռ. № 8072-ը թերի է, պահպանվել է ընդամենը 20 թերթ: Ձեռ. № 1492-ը ինքնագիր է, № 7424-ը արտագրված է № 1492-ից՝ անհայտ գրչի կողմից, Հակոբ Շամախեցու պատվերով՝ 1743 թ.: Հակոբ Շամախեցին շարունակել է Ավետիքի ավարտած տեղից և թողել հիշատակարան. «Արդ յետինս ի սպասաորաց րանին Յակոբ՝ անուամբ միայն վարդապետս Շամախեցի կոչեցեալ՝ որ ի ՌՃՂԲ (1743) թուականիս մերում, յորում գրեցուցի և ստացայ զայս գիրք՝ զոր և կազմել ետու: Այլ և կամեցայ և պատշաճ տեսի ի վախճանմանէ աստի գաւազանական տփոցս՝ զկիզբն առնել նորապես՝ գալ և իջանել և հասանել ի մերս ժամանակ ըստ ոճից և ըստ ձևոց նախկոյդ գաւազակնի տփոցդ»<sup>15</sup>, Հետագայում այդ շարունակութիւնը, որ № 7424 ձեռագրում ունի ընդհանուր էջակալում, արտագրվել ու կցվել է նաև № 1492 ձեռագրին, սակայն 1788 թ. հետո, որովհետև կա նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսի քարտուղար Ղունիկանոս գրչի շարունակութիւնը ևս (1748—1788 թթ.), տյն ևս ամբողջացնելու դիտավորութիւնամբ և էջակալված է առանձին: № 6243 ձեռագրից արտագրված է № 7424-ից՝ 1847 թ., Ալեքսանդրապոլում՝ «ձեռամբ յողնամեղ մահտեսի Համբարձում մահտեսի Յարութիւնեանի զաղթեցելոյ ի կարին մայրաքաղաքէ (այսինքն՝ Արզրումայ) յԱլեքսանդրապոլ քաղաք»<sup>16</sup>:

«Գավազանագիրքը» շարադրելու համար Ավետիք Տիգրանակերտցին օգտագործել է նաև պատմական մի շարք սկզբնաղբյուրներ: Գավազանագրքի № 1492 ձեռագրի 211բ, 212բ—213ա, № 6243 ձեռագրի 203բ, 204բ—205ա և № 7424-ի 204բ, 205բ—206ա էջերում կա մի ժամանակագրութիւն, որը ըստ կետի արխիվում գտնվող մի ընդօրինակութիւն հրատարակել է Վ. Հակոբյանը<sup>17</sup>, միաժամանակ նկատելով, որ այն նույնական է Առաքել Գավրիժեցու պատմութիւնի 86—87 էջերի<sup>18</sup> և Մատենադարանի № 5959 ձեռագրում առկա ժամանակագրութիւնի հետ (էջ 95ա—102ա): Այս ժամանակագրական հատվածների համադրութիւնից պարզվում է, որ կետի արխիվում եղած օրինակը արտագրված է Գավազանագրքի № 1492 ձեռագրից, որի համապատասխան հատվածների սկզբում և վերջում (լուսանցքներում) նշում է արված՝ հավանաբար ցույց տալու համար, թե որ մասը պիտի արտագրել: № 7424 ձեռագրում, ինչպես և սրանից ընդօրինակած № 6243-ում գրիչը բաց է թողել մեկ

շարադրանքն ավարտել է 1715-ին, իսկ ժամանակագրական աղյուսակը լրացրած է եղել մինչև 1) Ամբ Կենարարին մերոյ—ՌՉԻԸ (1728), 2) Թվական Հայոց—ՌՃՀԷ (1728): Վերջին նշումն է. «Ե թվին Հայոց ՌՃԿԳ (1715) ամին, մայիսի Ը (8) օժանի կաթողիկոս ամենայն հայոց Տէր Աստուածատուր Համատանցին, որում հրամանաւ նորին գրեցաւ նորատպ գիրքս գաւազանապատմ, որ կոչի Ածանց ի յայլ գրոց Աղիսակապատմագիր, որ ժողովեցեալ եղև և հաւաքեալ աստ ի Աւետիք նուստագոյն ծառայէդ: Խնդրեմ.....» (ձեռ. № 1492, էջ 215ա), իսկ շարունակութիւնն արդեն հիշատակարանն է (էջ 215ա—215բ): Ուղղելի է, ուրեմն, Հ. Աճառյանի Հայոց անձնանունների բառարանում եղած տեղեկութիւնը՝ վերցված Կարենյան ցուցակից. «Աւետիք պատմիչ. ունի «Պատմութ. ժամանակագրական կամ Գաւազանագիրք, սկսեալ ի սկզբանէ աշխարհի ցթիւ Հայոց ՌՃՀԵ (1726)», Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, 1942, էջ 342):

<sup>15</sup> Ձեռ. № 7424, էջ 208ա:

<sup>16</sup> Ձեռ. № 6243, էջ 215բ:

<sup>17</sup> Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, XIII—XVIII դդ., հ. II, Երևան, 1956, էջ 516—518:

<sup>18</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Գաւրիժեցույ», Վաղարշապատ, 1898

տող, որը կա հրատարակված բնագրում: Սա ևս ապացույց է այն բանի, որ հրատարակության հիմքը № 1492 ինքնագիր օրինակն է: Ա՛հա այդ մասը.

Զեռ. № 1492 (հրատ., էջ 517—518)

Զեռ. №№ 7424, 6243

«... և սկսաւ լինել սղութիւն հացի և ի չգոյ՛ է ուտելեաց սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս և զոյխառս և ի սպանել սուրբ կենդանեաց. սկսան ուտել զանսուրբ կենդանիս, զձի, զզորի և զէշ. մինչև զշուն և զկատու...» (էջ 213ա):

«... և եղև սղութիւն հացի և ի չգոյ՛ է ուտելեաց սկսան ուտել [ . . . . . ] զանսուրբ կենդանիս, զձի, զզորի, զէշ, մինչև զշուն և զկատու...» (էջ 206ա, էջ 205ա):

Այժմ կարելի է մի կարևոր շտկում կատարել հրատարակված բնագրի մեջ: Այստեղ կարդում ենք. «Ժէ (17) ամ հեծելակոխ եղեալ ի սովէ և ի սրոյ և բազումք երկիրք մեռան և աւերեցեանս»<sup>19</sup>: Զեռագրում կարդում ենք «ԺԾ (15) ամ հեծելակոխ եղեալ...»<sup>20</sup>

Ժամանակագրական հատվածը, որը, ինչպես ասվեց, կա նաև Առաքել Դավրիժեցու մոտ, ընդգրկում է օսմանյան սուլթան Մուրադ III-ի (1574—1595), Մուհամմեդ III-ի (1595—1603) իշխանության տարիներն ու 1606—1610 թթ. սովի նկարագրությունը: Այն փաստորեն առանձին բնագիր չէ, ինչպես մինչև այժմ համարվում էր<sup>21</sup>, այլ արտագրություն և Դավրիժեցու Պատմությունից: Ուրեմն, Ավետիք Տիգրանակերտցին Գավազանագիրքը գրելիս օգտվել է Առաքել Դավրիժեցու աշխատությունից<sup>22</sup>:

Ա. Դավրիժեցի

Ա. Տիգրանակերտցի<sup>24</sup>

(ձեռ. № 1492, «Մանր ժամանակագրություններ»)

«... Եւ այս թագաւորս սուլթան Մուրատս»<sup>23</sup> . . . . .

«Օսմանցւոց թագաւոր սուլթան Մուրատ, որդի Սէլիմին: Սէրաֆեբֆ սուրա առին զնախշվան և ի միւս ամին էաւ զՏէմուր Ղալիուն և բազում զօրս

19 «Մանր ժամանակագրություններ», էջ 516, 23—24:

20 Զեռ. № 1492, էջ 211ր: № 1492 մայր ձեռագրի և հրատարակված հատվածի մնացած ասորները հարկադրաբար իմաստային ոչ մի փոփոխություն չեն մտցնում և անհրաժեշտ չենք համարում վկայակոչել:

21 Ժամանակագրությունը առանձին բնագիր և հեղինակն էլ դեպքերին ժամանակակից է ընկալվում. «Ամենայն հավանականությամբ այս ժամանակագրությունը առանձին բնագիր է և կապ չունի Դավրիժեցու մեջբերածի հետ» («Մանր ժամանակագրություններ», էջ 507): «... Այս ժամանակագրության հեղինակը ժամանակակից է և ակնառանձին իր նկարագրած դեպքերին, նշանակում է շաղկապների մասին մենք ունենք մի ուրիշ սկզբնաղբյուր» («Մանր ժամանակագրություններ», էջ 535, ծանոթ. 56):

22 Դավրիժեցու Պատմության բոլոր ղուդահեռ հատվածները բերվում են Վաղարշապատի 1896 թ. հրատարակությունից:

23 Առաքել Դավրիժեցին մինչև այստեղ արդեն ներկայացրել էր սուլթան Մուրատին, իսկ Տիգրանակերտցին, սկսելով արտագրելը, հարկ է համարել Դավրիժեցու նախորդ պատմածներիով ներկայացնել սուլթանին:

24 Տիգրանակերտցու այս և մյուս հատվածների տակ հղվող էջերից առաջինը № 1492 ձեռագրին է, երկրորդը՝ «Մանր ժամանակագրություններ» նշված հատորինը:

առաքեաց բաղում զօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹարվէզ և զԵրևան, զԳանջալ, և զԱրշար, և զՄամախի, մինչ ի դուռն Ալանաց, զոր եղևալ է Աղէլսանդր Մակեղոնացի<sup>25</sup>, և (30) աուր ճանապարհ զլայնութիւնն և զերկայնութիւն տրեաց աշխարհացն, ժն (15) ամ հեծելակոխ եղևալ, ի սովու և ի սրոյ բազումք մեռան, և բազում կրկիր աւերեցան...» (էջ 568 20—27):

«Ի Ռիթ (1580) թուին նկղացաւ թագաւորն ի Հրէից համարձակութենէն և վերացոյց զփակեղն ի զլիսոց Հրէիցն, և քրիստոնէիցն ամենայն. ապա ի տեղիս տեղիս դաշառ ետուն և առին հրաման, փակեղ և զին յետ ժՂ (18) ամաց. ապա ի Կոստանդնուպօլիս և յայլ բազում քաղաք մնացին գդակով» (էջ 568 15—20):

«Ի Ռիթ. Յունուարի 2. մեռաւ սուլթան Մուրատն, և թաղաւորեաց Մահմետ որդի նորա, Յունվարի ԻԲ. ամս ժԲ. սա էառ երկու բերդ ի Մաճարէն: Ռիթ. դեկտեմբերի ևս. մեռաւ սուլթան Մուրատ, և թաղաւորեաց Մահմետ որդի նորա Յունվարի ժէ»<sup>26</sup> (էջ 583):

առաքեաց յաշխարհն Պարսից. և էառ զԹէվրիդ, զԵրևան, և զԿէնճէ և զԱրաշ և զՄամախի, զՇրուան, մինչ ի Թիֆլիս, և (30) աուր ճանապարհ զլայնութիւն և զերկայնութիւն տրեաց աշխարհացն: ժն (15) ամ հեծելակոխ եղևալ ի սովէ և ի սրոյ և բազումք երկիրք մեռան և աւերեցան» (էջ 211բ, էջ 516 18—24):

«...և ի Ռիթ (1580) թվին Հայոց նեղացեալ Մուրատ խոնթեարն ի Հրէից և ի քրիստոնէից համարձակութենէն և վերացոյց զփակեղն ի զլիսոց նոցա և սաստիկ եսաղ աբար. և սահմանեաց զսև գտակ դնելն, բայց ի տեղիս տեղիս կաշառս ետուն և առին զհրաման դնել զփակեղ: Յետ ժՂ (18) ամի ապա Կոստանդնուպօլիս և այլ բազում քաղաքք մնացին գտակով» (էջ 211բ, էջ 516 25—30):

«Ի Ռիթ (1594) թվին Հայոց, դեկտեմբերի ևս (31) սուլթան Մուրատն մեռաւ և մնաց հոգով մեռեալ հոգեաք մինչ ի Ռիթ (1595) թիւն և յունվարի 2(6), ապա մեռաւ: Եւ թաղաւորեաց Մահմետ որդի նորա յունվարի ժէ (17) և մինչ յունվարի ԻԲ (22), ապա ածաւ սուսեր թագաւորութեան ընդ մէջսն և նստաւ ի Թախթ և սա էառ Բ (2) բերք ի Մաճարէն»<sup>26</sup> (էջ 212 բ, էջ 516, 31—36):

<sup>25</sup> Մեզ թվում է, Տիգրանակերտցին վերապահությամբ է մոտեցել այդ հաղորդմանը և չի արտադրել:

<sup>26</sup> Առաքել Դավրիժեցու պատմության այս հատվածի նկատմամբ Ավետիք Տիգրանակերտցին ավելի ուշադիր է: Ինչպես տեսնում ենք, Դավրիժեցու մոտ նույն Ռիթ (1595) թվականը կրկնված է և սուլթան Մուրատի մահվան օրը նշանակված է մեկ տարեկազմին և մեկ էլ՝ տարեկազմին: Տիգրանակերտցին նկատել է, որ թվականներից մեկը պետք է մեկ տարով հետ տանել, և նա այս երկու ինքնուրույն նախադասությունները ձուլել է մի տրամաբանական շարադրանքի մեջ, հակասությունները լուծելով զուտ տրամաբանական բնույթի երկու անհրաժեշտ հավելումներով. եթե մահացել է 1494-ի դեկտ. 31-ին և 1595-ի հունվարի 6-ին, ուրեմն այդ ընթացքում եղել է հոգեվարքի մեջ (և ևս մնաց հոգով մեռեալ հոգեաքն): Մահմեդը թագավորել սկսում է մեկ հունվարի 17-ին և մեկ էլ՝ հունվարի 22-ին, ուրեմն երկրորդ ամսաթիվը կարող է վերաբերել նրա թագադրմանը (ապա ածաւ սուսեր թագաւորութեան ընդ մէջսն և նստաւ ի Թախթ): Դավրիժեցու հաղորդումների այս յուրօրինակ տարբերությունը զալիս է, անկասկած, նրա ձեռքի տակ եղած 2 տարբեր գրավոր աղբյուրներից: Դավրիժեցու այս հատվածը չի ծանոթագրված նաև ռուսերեն թարգմանության մեջ (տե՛ս Аракеп Даврх-

(էջ 568 31—32, էջ 569 1—14):  
 թիւն, ծառայքն և պարոնայքն ամենեքեան ապստամբեցան և երես դաճուցին ի նմանէ: Քանզի ինքն միայն ոչ էր իշխանաւոր, յորժամ որ տայր քաղաք մի փաշայի մի, կամ պարոնի մի, յետ Ժ. աւուր կամ Ի. աւուր մայրն կամ քոյրն, կամ իւր կիներ, կամ վեզիրն տային այլ փաշայի և առնէին բազում կարմիր դահեկան: ՁՏիգրանակերտն Ամիրթ ի վեց ամիսն՝ ինն փաշայի ետուն, կայր որ փաշայն կուգայր, կայր որ փաշի վաքիլն կուգայր, նոքա որ կուգային, գիտէին որ բանի յետքն փուչ էր, նոքա այլ կու սկսանէին ի կողպտել և ի թալանել զքաղաքն և զերկիրն: Զինչ երկարեմ որ գրով ոչ կարեմ պատմել, ի յԱմիրթ աստի և անտի շինութիւն կայր, ապա ի յԱմթայ կէս աւուր հողէն որ ելնաս, մինչ ի մեծ քաղաքն Ստամբոլ աւերութիւն է, ուր ուրեք գտանի շինութիւն» (էջ 568 31—32, էջ 569 1—14):

«և ոչ կարէր վարել զթագաւորութիւն, ծառայք և պարոնայքն ամենեքեան ապստամբեցան և զերես դարձուցին ի նմանէ. քանզի ինքն միայն ոչ էր իշխանաւոր, յորժամ տայր զքաղաք մի փաշայի միոյ կամ պարոնի, յետ Ժ (10) աւուր կամ Ի (20), մայրն կամ քոյրն, կամ իւր կիներ, կամ վեզիրն տային այլոց փաշայի և առնուին զբազում կարմիր դահեկան: ՁՏիգրանակերտն Համիրթ ի Զ(6) ամիսն Թ(9) փաշայի ետուն, կայր զի փաշայն գայր, կայր զի փաշայի վեքիլն գայր, և նոքա երբ գային, գիտեային զի բանի յետքն փուչ է: Նոքա այլ սկսանէին կողպտել և ի թալանել զքաղաքն և զերկիրն, և ոչ է կար մեզ պատմել զժամանակիս դառնութիւնն: Զի Համիրթ աստ և անդ շինութիւն կայր, ապա Համթայ կէս աւուր հողէն որ ի դուրս երթայր մինչ ի մեծ քաղաքն Ըստամբոլ աւերութիւն էր. ուր ուրեք գտանէր շինութիւն» (էջ 212բ, էջ 516 36—42, էջ 517 1—8):

Այս քաղաքութիւնից հետո Ավետիք Տիգրանակերտցին մեկ միջանկյալ նախադասութեամբ («Պատճառն այս է, զի յաւուրս սորս յայտնեցան ճէլալիք, որ են այսոքիկ») այս հատվածները կապում է ջելալինբերի շարժման նկարագրութեան հետ և սկսում ընդօրինակել Դավրիժեցու Պատմութեան էջ 86—87-ը<sup>27</sup>: Սովի նկարագրութիւնը ևս քաղված է Դավրիժեցու երկից.

**Ա. Դավրիժեցի**

«... ի չգոյէ հացի՝ սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս և զոչխարս: Եւ ի սպառել սուրբ կենդանեացն՝ սկսան ուտել զանսուրբ կենդանիս՝ զձի, և զչորի, և զէշ և զայլ անսուրբ կենդանիս. մինչև զշուն, և զկատու, և այլ ինչ որ ի ձեռս անկանէր վասն կարեաց կերակրոյն: Եւ իբրև այլ առաւել սաստկացաւ սովն, սկսան ուտել զմեռեալս՝

**Ավ. Տիգրանակերտցի**

«... և ի չգոյէ ուտելեաց սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս և զոչխարս և ի սպառել սուրբ կենդանեաց, սկսան ուտել զանսուրբ կենդանիս, զձի, զչորի, և զէշ . . . . .  
 . . . . . մինչև զշուն և զկատու: . . . . .  
 . . . . .  
 . . . . .  
 Եւ իբրև այլ առաւել սաստկացաւ սովն,

же и ц, Книга историй, перевод с арм., пред. и комм. Л. А. Ханларян, М., 1973, стр. 443).

<sup>27</sup> Հմմտ. «Մանր ժամանակագրութիւններ», էջ 517 9—40:

և ոչ թաղէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սովն: Եւ բաւումբ ի բաղում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին»<sup>28</sup> (էջ 88):

«Եւ ևղև սկիզբն սովուս ի ՌՄԵ (1606) թուին, յայսմ ամի թոյլ էր սովն և ոչ էր խիստ, իսկ ի մտանելն ՌՄԶ (1607) թին, և ի ՌՄէ (1608) կարի սաստկացաւ, և ի մտանելն ՌՄԸ (1609) թուլացաւ, և ի ՌՄԹ (1610) բարձաւ բնաւն ողորմութեամբն Աստուծոյ ամենախնամողին՝ որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուածոց իւրոց՝ և ոչ յաւիտեան պանէ ռխս, որում փառք յաւիտեանս ամէն» (էջ 92):

սկսան ուտել զմեռեալս . . . . .  
. . . . .  
. . . . . և հետեցան ըմբռնել զկենդանի մարդ և ուտել: Վա՛յ լսողութեանս, ով ընթերցողք» (էջ 213ա, էջ 517 40—46):

«Եւ եղև սկիզբն սովոյս ՌՄԵ (1606) թուին, յորում ամի թոյլ էր սովն և . . . . .  
. . . . . ի ՌՄԶ (1607) և ի ՌՄէ (1608) կարի սաստկացաւ և . . . . .  
. . . . . ՌՄԸ (1609) ին թուլացաւ, ի ՌՄԹ (1610) բարձաւ . . . . .  
. . . . . ողորմութեամբն Աստուծոյ . . . . .  
. . . . .  
որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուածոց իւրոց»<sup>29</sup> . . . (էջ 213ա, էջ 517 46—518 4):

Հետաքրքիր են նաև Գավազանագրքի հիշատակարանները, որոնք մասամբ լրացնում են Ավետիք Տիգրանակերտացու գործունեության մասին մեր ունեցած պատկերացումները: Գավազանագրքի ինքնագիր օրինակի (ձեռ. № 1492) հիշատակարաններից (էջ 171բ—172ա, 215ա—215բ) պարզվում է, որ Ավետիքը իր այդ աշխատությունը գրել սկսել է 1701 թ. և ավարտել՝ 1715-ին: Գոյություն է ունեցել Գավազանագրքի շորս ընդօրինակություն-տարբերակ և մեր ձեռքին այդ շորրորդ արտագրություն-սրբագրությունն է: Առաջին օրինակը գրվել է 1701—1707 թթ., Սեբաստիայում, 1707-ին՝ երկրորդը, 1708-ին՝ երրորդը, Թոխաթում: Առաջին երեք ընդօրինակություններում հիմնականում աշխատել է աստվածաշնչական մասերի վրա և միայն 1712 թ., Յոթնասնից թարգմանությունը ձեռք բերելուց հետո «եղև հնար գտումն անմիաբան թվոցս» և սկսել է շարադրել շորրորդ և վերջին ավարտուն օրինակը: Գրել է Աստվածատուր Համադանցի վարդապետի (կաթողիկոս՝ 1715, մայիսի 8—1725) հորդորանքով ու կարգադրությամբ, երբ վերջինս 1707 թ. Աղեքսանդր կաթողիկոսի կողմից նվիրակության էր ուղարկվել Սեբաստիա, Կեսարիա և Թոխաթ: Մեր ձեռքը հասած ինքնագիրը սկսել է գրել 1712 թ. հոկտեմբերի 2-ին, ավարտել 1715 թ. մայիսի 8-ից հետո և ուղարկել էջմիածին, կաթողիկոսին՝ Աստվածատուր Համադանցուն: Ավետիքը հիմնական աշխատանքը կատարել է Թոխաթում, որտեղ նրան Աստվածատուր Համադանցու կարգադրությամբ հովանավորել է «Թոխաթու Կաթնապուր կոչեցեալ սուրբ Ըստեփաննոս անուն եկեղեցո տէր Մխիթարի թոռ տէր Յոհանն, որ մականունն Թռչուն վերածայնեն» (էջ 215բ): Հիշատակարաններից պարզվում է նաև, որ

<sup>28</sup> Այս զուգարությունից երևում է, թե ինչպիսի ուղադրությամբ է քաղաքել Ա. Տիգրանակերտցին՝ անհարկի կրկնվող բաները օտարելով և բովանդակությունը լիաթարելով:  
<sup>29</sup> Հմմտ. նախորդ ծանոթագրությունը:



Տիգրանակերտցին եղել է սոցիալական ստորին խավին պատկանող անձնավորություն, նյութապես ոչ ապահով և հարկ է համարել գրի առնել, թե «տէր Յոհան աւագ եղբայրն իմ յամենայն ժամ յրաւիբէր զտառապեալ գրիչս ի տուն իւր և մխիթարէր մարմնաւոր կերակրիւ և ըմպելեօք և հորգորէր յուսագրանօք...» (էջ 215բ)։ Հավանաբար հենց այդ «տէր Յոհանի» մոտ էլ (1712—1715 թթ.) նա գտել է Առաքել Դավրիժեցու Պատմութիւնը։

Այսպիսով, ասվածը հիմք է տալիս եզրակացնելու՝ ա) Ավետիք Տիգրանակերտցին 1695 թ. եղել է էրզրում (Կարին), իսկ 1701 թ.՝ Սեբաստիա քաղաքներում և նրա աֆրիկյան ճանապարհորդության հավանական ժամանակը 1696—1699 թվականներն են։ բ) Հայտնի են դառնում Ավետիք Տիգրանակերտցու մեկ կարևոր աշխատության (Գավազանագրքի) չորս ձեռագրեր, որոնցից մեկը՝ ինքնագիր։ գ) «Մանր ժամանակագրություններում» տպագրված ժամանակագրական հատվածը (էջ 516—518) արտագրված է Գավազանագրքի Ն° 1492 ձեռագիր ինքնագիր օրինակից։ դ) Ավետիք Տիգրանակերտցին էլ իր հերթին այդ հատվածը քաղել է Առաքել Դավրիժեցու Պատմութիւնից, ուստի և դա առանձին բնագիր չէ։ Պարզվում է Գավազանագրքի աղբյուրներից մեկը։ ե) Հրատարակված հատվածի թվականներից մեկը ճշգրտվում է Գավազանագրքով և հաստատվում Դավրիժեցու Պատմութիւնում։ զ) Հայտնի են դառնում նոր տեղեկություններ միջնադարյան հայ գիտնականի գործունեության մասին։

## НОВЫЕ МАТЕРИАЛЫ ОБ АВЕТИКЕ ТИГРАНАКЕРТСКОМ

П. А. ЧОБАНЯН

### Резюме

Аветик Тигранакертский—известный ученый путешественник XVII—XVIII вв. О жизни и деятельности Аветика Тигранакертского мы знаем из памятных записей его же работ, которые были опубликованы Г. Алишаном в журнале «Բազմավեպ» в 1897 г.

В Матенадаране им. Маштоца хранятся две его работы: 1) Астрономия (рук. № 10095), 2) Книга генеалогий (Գավազանագրք) (рук. № 1492 (оригинал) №№ 7424, 6243, 8072).

Все сведения об Аветике Тигранакертском позволяют нам датировать совершенное им в Африку путешествие 1696—1699 гг.

В ходе исследования было выяснено, что хронологическая часть, опубликованная В. Акопяном во II томе «Мелких хроник» (стр. 516—518) имеет в своей основе рукопись № 1492 «Книги генеалогий». Выяснено также, что Аветик Тигранакертский в свою очередь переписал эту часть из «Истории» Аракеда Даврижеци, потому и это не самостоятельный текст.